



Australian Government

Aged Care Quality and Safety Commission

Aged Care Quality and Safety Commission-էն (Յանձնաժողովէն) որակի գնահատողներ պիտի այցելեն, ինամքի եւ ծառայութիւններու որակը ստուգելու համար:

Այս գնահատումը կը կոչուի տեղոյն վրայ հաշուեքննութիւն: Հաշուեքննութիւնը տեղի պիտի ունենայ առանց յայտարարելու, որպէսզի ծառայութիւնը տեղեակ չըլլայ թէ որ օրը կամ շաբաթը պիտի կատարուի հաշուեքննութիւնը:

Երբ որակի գնահատողները այցելեն տունը, ձեզի (կամ ձեզ ներկայացնող անձին) առիթը պիտի տրուի խօսելու գնահատողի մը ձեր ինամքին եւ ծառայութիւններու որակի մասին:

Դուք (կամ ձեզ ներկայացնող անձը) կրնայ նաեւ տեղեկութիւն տրամադրել նախքան հաշուեքննութիւնը: Դուք այդ կրնաք ընել հեռաձայնելով Յանձնաժողովին՝ **1800 951 822 (սեղմել թիւ 2 տարբերակը)** կամ լրացնելով Յանձնաժողովի առցանց հարցախոյզը:

Հարցախոյզը կը հարցնէ տարեցներու ինամքի ծառայութեան որակի եւ ապահովութեան վերաբերեալ ձեր փորձառութեան մասին: Դուք կրնաք այս հարցախոյզին մուտք գործել հետեւեալ կայքէջէն
<https://www.agedcarequality.gov.au/consumer-feedback>: Հարցախոյզը բանալու համար օգտագործեցէք ծածկագիրը:

Յանձնաժողովը կը յարգէ ձեր տեղեկութեան գաղտնիութիւնը եւ մեզի չի տրամադրեր այն մանրամասնութիւնները որոնք դուք քննարկած էք իրենց հետ, բացի եթէ դուք համաձայնիք ասոր, կամ եթէ անոնք մտահոգուած են ձեր ինամքի մասին:

Ձեր անձնական տուեալներն ու մեկնաբանութիւնները պիտի օգտագործուին որակի գնահատողներու կողմէ կայքի հաշուեքննութեան ընթացքին, ինչպէս նաեւ, այստեղ մատուցուող ինամքի եւ ծառայութիւններու որակի մասին իրենց գեկոյցը պատրաստելու ժամանակ:

Յանձնաժողովի գաղտնիութեան քաղաքականութեան եւ գործելակերպի մասին տեղեկութեան համար կը խնդրենք դիմել Յանձնաժողովի կայքէջին՝ [agedcarequality.gov.au](https://www.agedcarequality.gov.au) կամ կապուիլ Յանձնաժողովին հետ **1800 951 822**. հեռախօսահամարով:

Եթէ թարգմանիչի մը օգնութեան կարիքը ունիք կը խնդրենք հեռաձայնել Translating and Interpreting Service (TIS) (Գրաւոր եւ Բանաւոր Թարգմանչական Սպասարկութիւն) **131 450** թիւին եւ խնդրել՝ Aged Care Quality and Safety Commission.